ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013Թ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եղեգնաձոր 2014թ

Ընդհանուր տեղեկություններ մարզի մասին

Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ արևելքում, սահմանակից է Արարատի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերին, հարավ արևմուտքից Նախիջևանի ինքնավար հարապետությանը, ընդգրկում է Արփա գետի ավազանը, ունի լեռնային մակերևույթ: Մարզը զբաղեցնում է 2306 քառ.կմ տարածք, ունի 44 համայնք՝ 3 քաղաքային /Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ/ և 41 գյուղական, մարզկենտրոնն է Եղեգնաձոր քաղաքը:

Մարզի ցածրադիր գոտում /մինչև 1400 մ. բարձրությունը/ կլիման չոր է, օրական ջերմաստիճանների մեծ տատանումներով, մինչև 400 մմ. տեղումներով: Բարձրադիր գոտիներին՝ 1400-2800մ. բարձրությունները, բնորոշ են լեռնատափաստանային և լեռնաանտառային լանդշաֆտները:

Մարզն աչքի է ընկնում պատմա-ճարտարապետական և մշակութային արժեք ներկայացնող հուշարձաններով՝ եկեղեցիներով, վանքերով, խաչքարերով, հնագիտական բազմապիսի արժեքներով: Մարզի բնության գեղատեսիլ վայրերում տեղակայված են առողջարաններ, հյուրանոցներ և հանգստյան տներ: Մարզի տարածքը հարուստ է կրաքարերի, բազալտի, գրանիտի, ֆելզիտի, մարմարի, ապակու հումքի /կվարցային ավազ/ մեծ պաշարներով, ունի կադրային մեծ ներուժ՝ նշված հումքային բազայի վրա արտադրություն կազմակերպելու համար:

Գյուղատնտեսություն և բնապահպանություն

2013թ. ինչպես հանրապետությանում այնպես էլ մեր մարզում գյուղատնտեսության համար նպաստավոր տարի էր: Գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները բոլոր բնագավառներում գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշները: Ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում է 2012-13թթ. գյուղատնտեսական մթերքների արտադրության ցուցանիշները՝ Նախորդ տարվա համեմատ ամենաբարձր աճը եղել է խաղողի արտադրության գծով 21% , պտղինը՝ 13.8%, կաթինը 17.9՝%, վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է շուրջ՝ 4491 տ բարձորակ խաղող:

Գյուղատնտեսական մթերքների արտադրությունը Վայոց ձորի մարզում 2012-2013թթ

h/h	Անվանումը	տարածությունը հա			համախառը բերքը ց			
		2012թ	2013թ	տարբ.	2012թ	2013թ.	տարբ.	%
	Հացահատիկ և հատիկաընդեղեն	2636	2495	-141	60850	62149	1299	102
3	Բանջարեղեն	453	396	-57	66739	66840	101	100,2
4	Բոստան	19	14	-5	3050	3063	13	100,4
5	Կարտոֆիլ	187	178	-9	32175	32377	202	100,6
6	Պտուղ և հատապտուղ	1913	1951	38	50361	57302	6941	113,8
7	Խաղող	885	911	26	44035	53240	9205	121
8	Խոտ				264580	288080	23500	108.8
11	ընդ. ցանքային տարածությունը	4604	4505	-99				97.8
12	Կաթ տ				21100	24890	3790	117.9
13	Միս տ				5000	5550	550	111
14	Ձու մլն. Հատ				18.2	17.4	-0.8	96
15	**Համախառն արտադրանքը մլրդ. դրամ**				**18.2**			

Գյուղատնտեսական մթերքների արտադրության աճին նպաստել է նաև ՀՀ կառավարության կողմից պետական աջակցության ծրագրերով մարզի հողօգտագործողներին մատչելի գներով հատկացված 514տ ազոտական պարարտանյութը /մեկ պարկը 6000 դրամ/, 379077լ դիզելային վառելանյութը /մեկ լիտրը՝ 350 դրամ/, 40տ գարնանացան գարու և 71 տ առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացուները:

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար մարզին հատկացված 75կգ ցինկի ֆոսֆիդ մկնասպան թունանյութով պայքարի աշխատանքներ են իրականացվել Աղնջաձոր, Գնիշիկ, Խաչիկ, Ազատեկ, Բարձրունի Կարմրաշեն և Մարտիրոս համայնքներում՝ 625հա հողատարածքի վրա: ՀՀ գյուղատնտեսության նախարարության բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայության մասնագետների հետ համատեղ մշտական ուսումնասիրություն է իրականացվում բույսերի կարանտին և ոչ կարանտին հիվանդությունների և վնասատուների հայտնաբերման ուղղությամբ:

2014թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 22436 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 9639 գլուխ, մանր եղջերավոր՝ 23035 գլուխ, խոզեր՝ 1713 գլուխ, թռչուններ՝ 60027 գլուխ և մեղվաընտանիք՝ 23349 հատ:

Մարզի համայնքներում անասունների նկատմամբ կատարվել են պետական պատվերով նախատեսված բոլոր անասնաբուժական բուժպրոֆիլակտիկ միջոցառումները: Այսօրվա

դրությամբ մարզի անասնագլխաքանակը ապահով է ինֆեկցիոն և ինվազիոն հիվանդությունների նակատմամբ:

Համակարգվել է ջրամատակարար և ջրօգտագործողների ընկերությունների աշխատանքները, որոնց միջոցով ժամանակին վերանորոգվեցին ջրահան կայանները, միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերը: Ըստ ՋՕԸ-ի կազմած պլան-ժամանակացույցի կազմակերպվել է ոռոգման աշխատանքները: Ոռոգման սեզոնի ընթացքում ջուրօգտագործողներին է տրվել 7802 հազ. խմ ոռոգման ջուր , որի հասույթը կազմել է 85822 հազ. դրամ, գանձվել է 89385 հազ. դրամ, որը կազմում է հասույթի 104.0 %- ը: Մարզպետարանը աջակցություն է ցուցաբերել <<Վայք>> և <<Եղեգնաձոր>> ՋՕԸ -ին ոռոգման սեզոնի ընթացքում ոռոգման ջրի մատակարարման , առաջացած վթարների վերականգնման և վարձավճարների գանձման աշխատանքներում:

Ազատեկ համայնքի շուրջ 26 հա հողատարածք Արփա գետի հեղեղումներից պաշտպանելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության << Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցություն>> ԾԻԳ – ի կողմից իրականացվել է ափապաշտպան գաբիոնային շարվածք՝ 380 գծմ ընդհանուր երկարությամբ մոտ 61մլն. դրամ արժողությամբ: ՈՒսումնասիրվել է Եղեգիս և Արփա գետերի առավել սելավավտանգ հատվածները և ափապաշտպան կառույցներ ստեղծելու նպատակով ներկայացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն 2014 թ. հակահեղեղային միջոցառումների իրականացման ծրագրում ընդգրկելու համար:

Գյուղատնտեսության զարգացման կարևոր նախադրյալներից է արտադրության կազմակերպման մեքենայացումը, որը դեռևս ցածր մակարդակի վրա է, իսկ առկա մեքենաները, տրակտորները և գյուղ. գործիքները հիմնականում ֆիզիկապես ու բարոյապես մաշված են:

Գյուղացիական տնտեսությունների հողակտորները փոքր են և տարբեր հանդամասերում, իսկ եղած բազմամյա տնկարկների մեծ մասը հին են ու մշակության համար ոչ մեքենահարմար: Անհրաժեշտություն է առաջացել կազմավորելու գյուղատնտեսական կոոպերատիվներ՝ ինտենսիվ գյուղատնտեսություն վարելու նպատակով:

Գրեթե ամեն տարի մարզի գյուղատնտեսությանը մեծ վնաս են պատճառում բնական աղետները՝ /ցրտահարություն, կարկուտ, հեղեղ և այլն/: Կարկտահարության դեմ պայքարելու նպատակով վերջին տարիներին տեղադրվել են հակակարկտային կայաններ և գործընթացը շարունակվում է:

Հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսության փոխօգնության բանկի միջոցով գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 984 մլն դրամ գյուղատնտեսական վարկ, այդ թվում սուբսիդավորվող վարկ՝ 539 մլն դրամ:

Բնապահպանություն

Հաշվետու ժամանակաշջանում ուսումնասիրվել է մարզի տարածքում բնապահպանական խնդիրները և կազմվել են համապատասխան ծրագրեր ու առաջարկություններ խնդիրների լուծման և շրջակա միջավայրն աղտոտումից զերծ պահելու ուղղությամբ: Հիմնովին կարգի են բերվել Վայք և Եղեգնաձոր քաղաքների աղբավայրերը: Եղեգնաձոր քաղաքում համայնքների զարգացման երրորդ փուլի ծրագրի շրջանակներում 2012-2013թթ. ձեռք է բերվել 120 աղբաման, իսկ համաֆինանսավորման հաշվին պատրաստվել և տեղադրվել է 90 աղբարկղ:

Կանոնակարգված աղբաթափություն իրականացնելու նպատակով Եղեգնաձոր քաղաքի աղբավայրի մուտքը ցանկապատվել և տեղադրվել է դարպաս ցանկապատման աշխատանքները շարունակվում են: Ընդունվել է աշխատակից, որի միջոցով իրականացվում է շուրջօրյա հերթապահություն, ինչպես նաև աղբանոցի մաքրված տարածքներում մարզպետարանի աշխատակիցների կողմից տնկված մոտ 200 տնկիների անհրաժեշտ խնամքի աշխատանքները: Ջերմուկ և Վայք քաղաքներում սեփական միջոցների հաշվին տեղադրվել է Ջերմուկում՝ 60 աղբաման և 85 աղբարկղ, իսկ Վայքում՝ համապատասխանաբար 40 աղբաման,55 աղբարկղ: Այս պահին մարզի գյուղական համայնքներում չհսկվող և չարտոնագրված աղբակույտեր գործնականում գոյություն չունեն:

Մարզպետարանի կողմից աշխատանքներ են տարվում կենտրոնացված և միջհամայնքային աղբավայրերի տեղադրման ուղղությամբ:
Տարվա ընթացքում համակարգվել է մարզի տարածքում գործող անտառտնտեսությունում տարվող աշխատաքները՝ անտառների էկոլոգիական, սոցիալական նշանակության բարձրացման, անտառների վիճակի բարելավման, պահպանության, պաշտպանության, ընդլայնված վերարտադրության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Մշտական ուշադրության կենտրոնում է անտառների հակահրդեհային պահպանության կանխարգելիչ միջոցառումների ծրագրի իրականացման աշխատանքները: Մարզի տարածքում գործող անտառտնտեսության հաշվեկշռում գտնվող 15065 հա հողատարածքներից անտառածածկ է 7656 հա: Ստեղծված հանձնաժողովի միջոցով ուսումնասիրվել է մարզի տարածքում ջրերի և ընդերքի օգտագործման ու պահպանության վերաբերյալ բնապահպանական օրենսդրության պահանջների կիրառման ընթացքը: ՈՒսումնասիրությունների արդյունքում բացահայտված բացթողումները վերացնելու նպատակով առաջարկվել է ուժեղացնել տեսչական աշխատանքները ջրօգտագործող և ընդերք շահագործող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը բնապահպանական օրեսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Բնապահպանական պետական տեսչության Վայոց Ձորի տարածքային բաժնի, մարզային ոստիկանության և մարզպետարանի կողմից իրականացված տեսչական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է ապօրինի ծառահատման 4, որսագողության 2 և ձկնագողության 6 դեպքեր : Բնությանը հասցված վնասը վերականգնված է: Հաշվետու ժամանակաշրջանում ապօրինի ընդերք, ինչպես նաև հողի բերրի շերտի օգտագործման կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել: Մարզի տարածքում գործում են.

- հանքային ջրերի 4 հանքավայր
- քարի արդյունահանման 12 հանքավայր
- քարի վերամշակման 8 արտադրամաս:

<u>Հողաշինություն և հողօգտագործում</u>

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 230783.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 190340.8 հա, այդ թվում վարելահող՝ 16199.5 հա, բազմամյա տնկարքներ՝ 1361.6 հա, խոտհարքներ՝ 5014.4 հա, արոտ՝ 92326.3 հա, այլ հողատեսքեր 75438.4հա:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել 24 համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու առաջարկություններ, որից՝ 17-ին միջգերատեսչական հանձնաժողովը տվել է

դրական եզրակացություն: Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն «Գեոդեզիա և քարտեզագրություն » ՊՈԱԿ-ի մասնագետների և 2 համայնքի ղեկավարների հետ աշխատանքներ ենք իրականացրել համայնքների վարչական սահմանների սահմանանիշերի ամրացման և 44 համայնքների անձնագրերի կազման ու հանձնման գործընթացին:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 10 համայնքներում: Ուսումնասիրությունների արդյունքում մի շարք համայնքներում հայտնաբերվել են հետևյալ թերությունները՝ օտարվող հողամասերի չափերը պակաս են եղել նվազագույն չափերից, օտարման արձանագրությունները կազմվել են ոչ ճիշտ, պայմանագրերը ժամանակին չեն ներկայացվել պետական գրանցման: Մարզպետի մոտ քննարկման ժամանակ համապատասխան համայնքների ղեկավարներին առաջարկվել է կարճ ժամկետում նշված թերությունները վերացնել,իսկ Ջերմուկի և Գնդեվազի համայնքներում ըստ անհրաժեշտության՝ տեսչական ստուգումներ է կատարվել, որտեղ հայտնաբերվել է հողամասերի ոչ նպատակային նշանակության օգտագործում՝ աշխատանքներկ կանխվել են իսկ համայնքի ղեկավարների նկատմամբ <<ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն կիրառվել է վարչական տուգանք:

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ Գլաձոր և Սերս համայնքներում կատարել ենք համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ բարձրաժեքից - ցածրարժեքի:

Համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվել են՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օտարվել է 24.19 հա, որի ընդհանուր գումարը կազմում է 16049296.84 դրամ, որը հիմնականում ծախսվել է կապիտալ ակտիվների ձեռքբերման և շենքեր-շինությունների վերանորոգման համար:

Տարի	Վարձակալվող հողատարածք հա	Պայմանագրերի քանակը	Հաշվարկվել է վարձավճար հազ. դրամ	Գանձվել է հազ. դրամ	Տոկոս
2012	7130	1302	72703.4	74246.8	102.1
2013	7354.0	1343	75097.8	79808.3	106.2

Մարզի հողերի օգտագործման մակարդակը դեռևս բավարար չէ, որի հիմնական պատճառներն են.

- վարելահողերի 78 % -ը անջրդի են,
- հողերի բնական ցածր բերրիություն,
- բնակավայրերից հեռու գտնվելը:

Արդյունաբերություն

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռում են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները համապատասխանաբար կազմել են 22.5% և 60.0%, որոնք թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 43.8%-ը: Մարզի խոշոր և միջին կազմակերպություններին, որոնք կազմել են ընդհանուր թվաքանակում 12.5%, բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 52.9%-ը:

Մարզում 2013թ-ի ընթացքում արդյունաբերական արտադրանք թողարկվել է 9517.1 մլն դրամի (ընթացիկ գներով) արտադրանք, որը կազմել է Հանրապետությունում արտադրված արտադրանքի 0.82 %-ը: 2012թ-ի ընթացքում արդյունաբերական արտադրանք թողարկվել է 9151.2մլն դրամի (ընթացիկ գներով) արտադրանք: 2013թ-ին արդյունաբերական արտադրանքը նախորդ տարվա նույն ժամանակի համեմատությամբ աճել է 4.1%-ով:

Մարզի արդյունաբերական արտադրանքի գերակշռող մասը բաժին է ընկնում գինեգործությանը և հանքային ջրեի արտադրությանը: 2013թ. արտադրանքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ համապատասխանաբար գինեգործությունը աճել է 5.3%-ով, հանքային ջրեի արտադրությանը աճել է 7.7%-ով:

Մշակվել է մարզի տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների փաթեթ, մասնավորապես՝ գյուղ. մթերքների վերամշակման, զբոսաշրջության, տեղական հումքերի / կվարցային ավազ, ֆելզիտ, բազալտ / վրա նոր արտադրությունների հիմնման, փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման, այլընտրանքային / արեգակնային, քամու / էներգետիկայի զարգացման:

2013 թվականին մարզում մեծ առաջընդաց է գրանցվել էլ. էներգիայի արտադրության ոլորտում, սկսվել է 9 ՀԷԿ-եիի շինարարությունը՝ ներդրվել մոտավորապես 3 մլդ. Դրամ գումար:

Մարզի զարգացման հեռանկարային ոլորտներից է զբոսաշրջությունը, որը մշական ուշադրության կենտրոնում է, մասնավորապես Ջերմուկ քաղաքում կառուցվում է հյուրանոցային, առողջարանային նոր համալիր /ներդրվել է մոտավորապես 3 մլն Ամն դոլար գումար/:

Մարզպետարանի օժանդակությամբ մշակվել և ՀՀ կառավարություն, առևտրային բանկեր են ներկայացվել բազմաթիվ ներդրումային ծրագրեր, որոնց մեծ մասը ֆինանսավորվել է, մասսնավորապես ՀՀ կառավարոթյուն հավանությանն են արժանացել <Մեգա Արարատ> ՍՊ, <Գոլդեն Գոութ> ՍՊ և <Վայք գրուպ> ՓԲ ընկերությունների ծրագրերը որոնցից երկուսը արդեն ֆինանսավորվել են: Մարզի գործարարների կազմակերպվում են համաժողովներ և ամեն տարի ավանդաբար /հոկտեմբեր ասին / կազմակերպվում է գյուղ մթերքների, արդյունաբերական արտադրանքի ցուցահանդես, ինչպես նաև գինու տոն:

Մարզպետարանը մարզի գործարարներին, ձեռներեցներին աջակցում է թողարկվող արտադրանքի գովազդման, հանրապետական և միջազգային ցուցահանդեսներում նրանց մասնակցության ապահովման ուղղությամբ:

Մարզում գործում են շուրջ 12 տնտեսվարող սուբյեկտների և օտարերկրյա ներդրողների համատեղ ձեռնարկումներ որոց ցուցաբերվում է բազմակողմանի աջակցություն, օտարերկրյա ներդրողներին / հատկապես մարզի նախկին բնակիչներին / խրախուսում ենք ներդրումներ կատարել մարզում:

Սակայն մարզի տնտեսության և մասնավորապես արդյունաբերության զարգացման ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ՝

-Մարզի տնտեսության զարգացման համար դեռևս բավարար չեն կատարված ներդրումների ծավալները : Հրատապ խնդիր է մարզի միակ՝ Եղեգնաձորի պահածոների գործարանի վերագործարկումը:

-Մարզում դեռևս լիարժեքորեն չի գործում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական աջակցության համակարգը, այն դեռևս չի հասնում մարզի բոլոր համայնքներին, ինչը իր հերթին չի նպաստում մարզի համայնքների համամասնական զարգացմանը: Խնդրի լուծմանը կարող է նպաստել երկարաժամկետ մատչելի վարկային միջոցներ ներգրավումը, ինչպես նաև գրավախնդիրների լուծումը:

-Արդյունաբերության ոլորտում դեռևս չի ձևավորվել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման մեխանիզմը, ցածր է մնում արտադրության արդյունավետության և տնտեսական ներուժի օգտագործման մակարդակը:

<u>Արտաքին կապեր</u>

2013թ-ի նեյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը ՀՀ Վայոց ձորում էին ՌԴ Նիժեգորոդի և Արխանգելսկի մարզերի նահանգապետերը: քննարկվեցին մարզերի միջև կնքված տնտեսական համագործակցության պայմանագրից և համատեղ գործողությունների ծրագրից բխող հարցեր: 25/10/2013թ մարզպետը հանդիպեց հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողովի անդամների և Ղազախստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արա Սահակյանի հետ: 25/10/2013թ մարզպետը պաշտոնական այցով մեկնել է Ֆրանսիա: Հայաստանի համայնքների միության և Ռեոն Ալպեր նահանգի շրջանային խորհրդի միջև ստորագրվեց համաձայնագիր, որով նախատեսվում է Ռեոն Ալպեր նահանգի կողմից բազմաթիվ ծրագրերի իրականացում ՀՀ մի շարք համայնքներում, այդ թվում ՀՀ Վայոց ձորի մարզում: Մասնավորապես, նախատեսվում են ծրագրեր իրականացնել գյուղատնտեսության, զբոսաշրջության և կրթության ոլորտներում: 30/09/2013 թ-ին մարզպետի գլխավորած պատվիրակությունը միջազգային համագործակցության շրջանակներում մեկնել է Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգի Խոյի կուսակալություն: Քննարկվել է մասնավոր հատվածի զարգացման հնարավորությունները: 2013 թվականի սեպտեմբերի 24-ին ՀՀ Վայոց ձորի մարզ էր այցելել Հայաստանի Հանրապետությունում Քուվեյթի արտակարգ և լիազոր դեսպան Բասսամ Մուհամմադ Ալ-Քաբանդին: Մարզպետի մոտ տեղի ունեցած աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկվեցին տարածքային իշխանությունների մակարդակով Հայաստանի և Քուվեյթի միջև բարեկամության և համագործակցության զարգացման խնդիրներ և հեռանկարներ: 19/09/2013թ-ին մարզպետի հրավերով ՀՀ Վայոց ձորի մարզ էր այցելել Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզային գործադիր կոմիտեի նախագահ (նահանգապետ) Բորիս Բատուրայի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին զբոսաշրջային ոլորտում համագործակցության,

մասնավորապես, Ջերմուկի առողջարաններում Բելառուսի քաղաքացիների բուժման և հանգստի կազմակերպման հեռանկարներին առնչվող հարցեր: Ս/թ օգոստոսի 20-22-ը ՀՀ մարզպետը հյուրընկալել էր Չեխիայի հանրապետության Կարլովի Վարի երկրամասի պատվիրակությունը, նահանգապետ Յոզեֆ Նովոտնի գլխավորությամբ: Հանդիպմանը քննարկվեց մարզային և նահանգային մակարդակներում հետագա համագործակցության հարցեր: Ս/թ հուլիսի 19-ին մարզպետը հյուրընկալել էր Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սուրեշ Բաբուին: Մարզպետի մոտ տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: 2014 թվականին դեսպանատունը ,,Հայաստան,, համահայկական հիմնադրամի հետ համատեղ Վայոց ձորի մարզի բոլոր դպրոցներում կիրականացնի համակարգիչներով հագեցած ինտերնետային դասարաներ ստեղծելու ծրագիր: 2013թ. հունիսի 16-19-ը ՌԴ Արխանգելսկի մարզում էր մարզպետի գլխավորած պատվիրակությունը: Այցի շրջանակներում ստորագրվել է 2013-2014թթ. համար համագործակցության միջոցառումների պլանը /ծրագիրը/, քննարկել են նաև համագործակցության ոլորտներին առնչվող այլ հարցեր: 2013 թվականի ապրիլի 12-ին Հայաստանի Հանրապետությունում Բելառուսի Հանրապետության Արտակարգ եւ լիազոր դեսպան Ս. Ն.Սուխորենկոն և նրա խորհդական Մ.Գ. Ցիվինսկայան այցելեցին Վայոց ձորի մարզ: մարզպետի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին միջմարզային համագործակցության հարցեր, առաջարկվեց համագործակցել Մինսկի մարզի հետ, պայմանավորվածություն ձեռք բերվեց մշակել և երկկողմանի համաձայնությամբ ստորագրել համագործակցության համաձայնագիր :

<u>Քաղաքաշինություն</u>

Կազմել և համապատասխան նախարարություններ ենք ներկայացրել քաղաքաշինության բնագավառում 2013-2015 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագիրը և 2013 թվականին նախատեսվող օբյեկտների հիմնանորոգման բյուջետային հայտերը՝ ըստ կոնկրետ բնագավառների:

- Քաղաքաշինության բնագավառի հիմնախնդիրները կապված են մարզի և դրանում ընդգրկված բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, մշակութային, առողջապահական, մարզական օբյեկտների շինարարության և հիմնանորոգման ինչպես նաև բնակֆոնդի հիմնանորոգման, քաղաքաշինական այլ խնդիրների և ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծության հետ :
- Աշխատանքներ են իրականացվել նախագծային ինստիտուտների հետ նախագծերի հստակեցման, ծավալների ճշտման և համադրումների գործում :
- Մրցույթի է ներկայացվել 2013 թվականին պետական բյուջեով նախատեսված հիմնանորոգման ենթակա օբյեկտների մրցույթների անցկացման փաստաթղթերի փաթեթները :

1, ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացված շինարարական ծրագրեր ՝
Այդ թվում

ա)_Արենիի մարզադահլիճի վերակառուցում – 399525.0 հազ.դրամ:

բ) ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 7-ի N 130 - Ն որոշմամբ մարզի համայնքներին առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների IV փուլի շրջանակներում իրականացվել է՝

h/h	Օբյեկտի անվանումը	Կատարված աշխատանքների գումար հազ.դրամ
1	գ.Զառիթափ,գազատարի վերանորոգում	**6860,0**
2	Մալիշկայի թիվ 2 դպրոցի ջրհեռացման համակարգի և կաթսայատան կառուցում	**15500,0**
3	ք.Ջերմուկ,Ձախափնյակ թաղամասի 11 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի հիմնանորոգում	**16650,7**
4	ք.Ջերմուկ,Ձախափնյակ թաղամասի 23 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի հիմնանորոգում	**5525,7**
5	ք.Ջերմուկ,Ձախափնյակ թաղամասի 26 բ բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի հիմնանորոգում	**1823,0**
6	ք.Եղեգնաձոր, Միկոյան 13 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքիհիմնանորոգում	**9907,2**
7	ք.Եղեգնաձոր, Մոմիկի 2 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի հիմնանորոգում	**12172,8**
8	ք.Վայք,Երկրաբանների 3 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի հիմնանորոգում	**11245,0**
9	ք.Վայք,Շահումյան 95 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի հիմնանորոգում	**10835,0**
10	գ.Գոմք,դպրոցի շենքի դռների և պատուհանների փոխում	**9600,0**
11	գ.Արտաբույնք,մշակույթի տան տանիքի հիմնանորոգում	**22650,0**
12	գ.Սալլի,մշակույթի տան տանիքի հիմնանորոգում	**4950,0**
13	գ.Խաչիկ,վթարային տների դիմաց փոխհատուցման տրամադրում	**20000,0**
14	ք.Եղեգնաձոր, երաժշտական դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում	**1423,7**
Ընդամենը հազ. դրամ		**149143.1**

գ) 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 1105 - Ն որոշումով /V հրատապ/ իրականացվել է՝

1	Մալիշկա համայնքի թիվ 2 դպրոցի ջեռուցման համակարգի և կաթսայատան կառուցում	2000.0
2	Խնձորուտ համայնքի խմելու ջրագծի կառուցում	4500.0
3	Արտավան համայնքի համայնքային կենտրոնի նորոգում	2425.0
4	Զառիթափ համայնքի դպրոցի մանրահատակի վերանորոգում	1455.0
	Ընդամենը	**10380.0**

2. ՀՀ պետական բյուջեի միջոցներով քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է՝

2.1 Ելփինի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում - **45553.3** հազ.դրամ:

3. ՀՀ պետական բյուջեի միջոցներով մշակույթի նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է՝

3.1 Խաչիկի Քարակոպ վանքի վերանորոգում - **14560.0** հազ.դրամ:

4. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով 2012 թվականի ընթացքում սկսվել է և կավարտվի 2014 թվականին՝

h/h	**Օբյեկտի անվանումը**	**Հատկացված գումար հազ.դրամ**	**2012թ.**	**2013թ.**	**Շարունակելի 2014թ.**
1	Գետափ համայնքի մանկապարտեզի հիմնանորոգում	130000	10000.0	85000.0	35000.0
2	Գլաձոր համայնքի մանկապարտեզի հիմնանորոգում	120000	17000.0	85000.0	18000.0
3	Մալիշկայի № 2 մանկապարտեզի հիմնանորոգում	120000		47000.0	73000.0
4	Ռինդ գյուղի խմելու ջրի արտաքին ցանցի հիմնանորոգում	120000		120000.0	
Ընդամենը հազ. դրամ				**337000.0**	

5. <<Քաունթեր Փարթ>> կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվել է՝

1	Վայք համայնքի արվեստի դպրոցի վերանորոգում և ջեռուցման համակարգի անցկացում (մշակույթի տան I-III)	35000.0
2	Գոմքի համայնքային կենտրոնի հիմնանորոգում և գույքի համալրում	12000.0
3	Բարձրունի համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգում	16000.0
4	Գետափի համայնքային կենտրոնի վերանորոգում II հարկ	8000.0
5	Գետափի 510 մ փողոցային լուսավորության մոնտաժում	4000.0
	Ընդամենը	**75000.0**

Ընդամենը մարզում 2013 թվականի կապիտալ ներդրումները քաղաքաշինության բնագավառում կազմում են՝ 671 161.4 հազ. դրամ

Ճարտարապետության բնագավառ

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կառուցապատման գործառույթները (հողհատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, ճարտարապետահատակագծային նախագծերի փաստաթղթերի համաձայնեցում) նախարարության հետ համաձայնեցման աշխատանքների իրականացում.

- Համայնքների ղեկավարների կողմից մարզպետի համաձայնեցմանը ներկայացված 3 հողհատկացումների վերաբերյալ առաջարկությունները սահմանված ժամկետում ուղարկվել

է ՀՀ քաղաքաշինության նախարարություն համաձայնեցման (ՀՀ կառավարության 30 հուլիս 1998թ. № 479 որոշման կարգի պահանջներին համապատասխան):

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքների իրականացում.

- Մարզի 6 համայնքներում իրականացվել է հողերի նպատակային նշանակության փոփոխության սխեմաների ուղարկում միջգերատեսչական հանձնաժողով, որի կողմից ստացվել է դրական եզրակացություն:

Մարզի 44 համայնքներից քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ապահոված է 4-ը, իսկ 40 համայնքներ չունեն գլխավոր հատակագծեր, որի պատճառով կառուցապատման աշխատանքները իրականացվում են անկանոն :

- 2013 թվականի ընթացքում աշխատանքներ է տարվել գյուղական համայնքների ղեկավարների հետ պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.04.2010թ. № 208-Ն որոշման կատարման ուղղությամբ :
- Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գործընթացին առնչվող և քաղաքաշինական գործունեությունը կարգավորող գործառույթների իրականացում՝

26 հունիսի 2009թ. № 728-Ն ՀՀ Կառավարության որոշման համաձայն Վայոց ձորի մարզից որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ ընտրվել է Ջերմուկ քաղաքը : Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի մեջ քաղաքաշինության նախարարության կողմից կատարվում է անհրաժեշտ փոփոխություններ և քաղաքաշինության վարչությունը ակտիվ աշխատանքներ է իրականացնում գլխավոր հատակագծի համար տեխնիկական պայմանների տրամադրման ուղղությամբ : 2013 թվականի ընթացքում իրականացվեց Ջերմուկ քաղաքի նոր գլխավոր հատակագծի կազմում և ներկայացվեց ՀՀ կառավարության համաձայնեցմանը :

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմին առաջարկվել է պահպանել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում (ք.Ջերմուկ) քաղաքաշինական գործունեության իրականացմանը վերաբերվող ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգերի պահանջները:

● Հյուսիս–հարավ ճանապարհային միջանցքի շինարարության իրականացման նպատակով մարզի տարածքով անցնող Մ-2, Ելփին-Սարավան միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի պաշտպանական գոտում և օտարման շերտում կասեցվել է քաղաքաշինական նպատակով հողհատկացումների և շինարարության իրականացման աշխատանքները:

Միաժամանակ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհին հարող տարածքներում գտնվող օբյեկտներին տրվել է ծանուցագիր, որով տեղեկացվել է ՀՀ կառավարության 2009թ. № 968 Ա որոշման մասին:

Համայնքների ղեկավարների կողմից հուղարկավորությունների կազմակերպման գերեզմանատների շահագործման ոլորտում աշխատանքների վերահսկողության իրականացում .

Վայոց ձորի մարզի տարածքում գոյություն ունեն 66- գերեզմանատներ, որոնք զբաղեցնում են 80.75 հա տարածք :

Հյուղարկավորությունների կազմակերպման նպատակով հողհատկացման առաջարկություն է ուղարկվել համաձայնեցման ՀՀ քաղաքաշինության նախարարություն / ք,Եղեգնաձոր/, իսկ Վայք քաղաքում, Վայոց ձոր թեմի առաջնորդարանի մասնակցությամբ կառուցվում է հյուղարկավորությունների կազմակերպման համար նախատեսված շինություն:

Համայնքների ղեկավարներին է տրամադրվել և պարզաբանվել <<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների

շահագործման մասին>> ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 2006թվականի նոյեմբերի 223-ի № 1910-Ն որոշումը և ամենօրյա աշխատանքներ է տարվում առկա գերեզմանատների տարածքների օգտագործման, շահագործման և պահպանման նկատմամբ:

Վայոց ձորի մարզի ՄԺԾ 2013-2015թթ. ծրագրում նախատեսվում է ապահովել գերեզմանատների տարածքների նկատմամբ սահմանված պահանջների կատարման ուսումնասիրությունների իրականացում, ստացված տեղեկությունների վերլուծություն, վիճակագրական ռեգիստրում զետեղում, ինչպես նաև բացահայտված խախտումների վերաբերյալ միջոցառումների իրականացում:

- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության <Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողության իրականացնելու կարգը սահմանելու մասին> 1998թ. հոկտեմբերի 12-ի 624 որոշումը, մարզպետի կարգադրության հիման վրա քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեությունը, վերահսկելու նպատակով իրականացվել է պլանային ստուգումներ մարզի 44 համայնքներում կազմվել է արձանագրություններ, տրվել է հանձնարարականներ թերությունները վերացնելու ուղղությամբ:
- Քաղաքաշինական պետական տեսչության հետ համատեղ աշխատանքներ է տարվել ինքնակամ շինությունների հայտնաբերման ուղղությամբ,23 ստուգման և 23 վերստուգման արդյունքում հայտնաբերված քաղաքաշինական նորմերով խախտման պատճառով նշանակվել է տուգանք 1220.0 հազ.դրամ:
- Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) բնակելի կառուցապատման օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգը տրամադրված է ՀՀ Վայոց ձորի մարզի բոլոր համայնքներին, ինչպես նաև Խաչիկ համայնքի առաջնահերթության կարգով նոր բնակարաններ կառուցելու կարիք ունեցող 12 ընտանիքների :
- 2013 թվականի ընթացքում ստացվել է դիմում բողոքներ և գրություններ, որոնք ուսումնասիրվել և պատասխանվել է ժամանակին:

Ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

Չնայած կատարված աշխատանքներին ջրամատակարարման և ջրհեռացման համակարգերում հիմնախնդիրները շատ են՝

1 .Գյուղական համայնքներում խմելու ջրի արտաքին ցանցերը 90% հիմնանորոգված են, իսկ ներքին ցանցերը հիմնականում գտնվում են ֆիզիկապես մաշված վիճակում, որը պատճառ է դառնում ջրի կորստի և որակական հատկանիշների վատթարացմանը :

2. Հրատապ խնդիր է 2 քաղաքներում (Եղեգնաձոր, Վայք) կոյուղու մաքրման կայանների (կոլեկտորի) կառուցումը :

Կոմունալ տնտեսություն

Ջրամատակարարման և Ջրահեռացման Հարաֆային Շահագործման <Հարաֆային> տարածքային մասնաճյուղի կողմից սպասարկվում է 3 քաղաքային (Եղեգնաձոր ,Վայք, Ջերմուկ) և 4 գյուղական համայնքներ (Գետափ,Մալիշկա, Շատին, Արտաբույնք) վերջին երկուսը մասնակի : Մյուս գյուղական համայնքներում ջրամատակարարումը իրականացվում է տեղական ջրաղբյուրներից :

2013 թվականի ընթացքում ՋՋՀՇ <Հարաֆային> տարածքային մասնաճյուղի տնօրինության հետ կազմակերպվել են համատեղ քննարկումներ ազգաբնակչությանը տրվող

խմելու ջրի որակական հատկանիշների ապահովման, ժամային գրաֆիկների ճշտման, ներքին ցանցերում կորուստների կրճատման ուղղությամբ :

Մարզպետարանը հսկողություն է իրականացնում ազգաբնակչության կողմից բարցրացված խնդիրների լուծմանը : Վերահսկում է կոմունալ ծառայությունների դիմաց վարձավճարների գանձմանը :

ՋՋՀՇ <Հարաֆային> տարածքային մասնաճյուղի կողմից 2013 թվականին կատարվել է ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի ընդհանուր արժեքը կազմում է 22.5 մլն.դրամ : 2013 թվականի ընթացքում մարզում ջրամատակարարման և ջրհեռացման ծառայությունների դիմաց նախատեսված 192785.5 հազ. դրամ գումարի դիմաց գանձվել է 199915.9 հազ. դրամ, որը կազմում է 103.7 % :

Տարվել են աշխատանքներ կրճատելու ջրի կորուստները, որի արդյունքում բնակչությանը 24 ժամյա որակյալ ջուր է մատակարարվում Ջերմուկ և Վայք քաղաքներում, իսկ Եղեգնաձորում մասնակի :

2013 թվականի ընթացքում ծավալուն բացատրական և մասնագիտական աշխատանքներ են տարել մարզի համայնքներում կոմունալ ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման գործընթացը կազմակերպելու և իրավական դաշտ ստեղծելու համար :

Համայնքների կողմից կնքվել են պայմանագրեր մարզային հակահամաճարակային կենտրոնի հետ, որոնք պարբերաբար վերահսկում են խմելու ջրի որակական հատկանիշները : Մարզի քաղաքային համայնքներում աղբահանությունը կատարվում է կոմունալ ծառայությունների միջոցով իսկ գյուղական համայնքներում գյուղապետարանների միջոցով : 3 քաղաքային և 1 գյուղական /Գետափ/ համայնքներում աղբահանության ծառայության դիմաց նախատեսված 20555.6 հազ. դրամի դիմաց գանձվել է 17494.6 հազ. դրամ, որը կազմում է 85.1 % :

Անհրաժեշտ խորհրդատվական աշխատանքներ են տարվում մարզի գյուղական համայնքներում աղբահանությունը կազմակերպելու ուղղությամբ :

Առաջարկվել է համայնքների ղեկավարներին տրամադրել համապատասխան տարածքներ որտեղ կթափվեն կենցաղային աղբը ;

Մարզպետարանի կողմից իրականացվում է պարբերաբար ստուգայցեր աղբավայրերի շրջակա միջավայրը չաղտոտելու և վարակազերծելու ուղղությամբ ;

Բնակարանաշինություն

- ՀՀ կառավարության 2 մայիսի 2013թ. N 457-Ա ուշմամբ տրամադրվել է 20.0մլն. ՀՀ դրամ, որը բախշվել է Խաչիկ համայնքի 5 տնտեսությա, աշխատանքները ավարտվել են պայմանագրով նախատեսված ժամկետում:

Բնակարանաշինության նպատակով հատկացված գումարները առաջնահերթության սկզբունքով տրամադրվել են համայնքում առկա գրանցված IV կարգի վթարային աստիճան ունեցող առանձնատների բնակիչներին հաշվի առնելով սոցիալական վիճակը և շնչերի թիվը:

- < Հայսեյսմշին ԿՊ ևԳՀԻ> ԲԲԸ կազմակերպության կողմից տրված եզրակացությունների հիման վրա հաշվառվել է մարզի բնակավայրերի վթարային բնակելի տները և ներկայացվել ՀՀ կառավարություն :

  Մարզում հաշվառված է Եղեգնաձոր քաղաքի Միկոյան-16 բազմաբնակարան բնակելի շենքը, որը ունի 4-րդ աստիճանի վթարայնություն , ինչպես նաև 4-րդ աստիճանի 215 և 3-րդ աստիճանի 206 անհատական բնակելի տներ:

- ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ համատեղ ուսումնասիրվել է մարզի տարածքում սողանքային և քարարթափման գոտիների վիճակը, աշխատանքներ են

տարվում նման երևույթների կանխարգելման , բնակիչների տարահանման կազմակերպման ուղղությամբ :

Սողանքային երևույթները առավել արտացոլված են մարզի 6 գյուղերում՝ Գնիշիկ,Մարտիրոս,Չիվա,Ագարակաձոր,Գետափ,Հորբատեղ, քարաթափումները՝ Շատին, Արտաբույնք, Հերմոն,Եղեգիս և Գետափ գյուղերում :

Գազիֆիկացում

2013 թվականին <ՀայՌուսԳազարդ> -ի կողմից գազիֆիկացվել է 160 բնակարաններ, որից 35-ը բազմաբնակարան, 125- առանձնատուն:

Բնական գազ է մատակարարվում մարզի 3 քաղաքային և 11 գյուղական համայնքներում:

2013թ-ին անվտանգության ապահովման նպատակով բնակարաններում տեղադրվել է 191 հատ անվտանգության ազդանշանիչ համակարգ, որից 145-ը առանձնատներում, իսկ 46 բազմաբնակարան շենքերում:

Գործող Իրան-Հայաստան գազամուղը հնարավորություն է ընձեռնում հետագայում կատարել ուղեգծին հարակից մարզի համայնքների գազիֆիկացման աշխատանքների կատարմանը:

Մարզի Փոռ և Զառիթափ համայնքներում գազատարի շինմոնտաժային աշխատանքները ավարտվել են և հանձնվել շահագործման:

Տրանսպորտ և ճանապարհաշինություն

2013թ. ՀՀ պետական բյուջեով Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 311.9 մլն դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է 274.0 կմ ճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներ 76.3 մլն դրամ արժեքով և նույն նշանակության 191.0 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 235.6 մլն դրամ արժեքով, իսկ մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 65.422 մլն. դրամ գումար: 2013թ. ընթացքում նշված ծրագրի շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել է 118.7 կմ՝ 45.0 մլն դրամ արժեքով ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 29.0 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 20.422 մլն դրամ արժեքով:

Վերահսկվել է մարզում վերանորոգվող ավտոճանապարհների աշխատանքների կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում շինարարական կազմակերպություններին ցուցաբերվել է աջակցություն:

2013թ. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության միջոցով պետական բյուջեի ֆինանսավորմամբ ՀՀ Վայոց ձորի մարզում կատարվել է հետևյալ աշխատանքները.

1. Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 149+750 – կմ 140+775 /25մ/ ճանապարհահատվածում փլուզված հենապատի կառուցում - 39.0 մլն. դրամ
2.Սևան – Մարտունի – Գետափ ավտոճանապարհի կմ 112+560 – կմ 113+148 հատվածի տեղամասի վերականգնում -33.0 մլն. դրամ

3. Եղեգնաձոր քաղաքի Սպանդարյան և Նարեկացի - Արսենյան փողոցների հիմնանորոգում 1.5 կմ 230.0 մլն դրամ:

4. Գնդևազ գյուղի 2.0կմ երկարության ներհամայնքային փողոցների հիմնանորոգում 157.6 մլն. դրամ

2013թ. մարզպետարանի միջոցով ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ ՀՀ Վայոց ձորի մարզում իրականացվել է.

1. Եղեգնաձոր քաղաքի Մոմիկի փողոցի բարեկարգում և ասֆալտապատում 0.402 կմ 61.0 մլն. դրամ

Ֆինանսավորման բոլոր աղբյուրների գծով 2013թ. մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառուցվածքների /կամուրջներ/ հիմանանորոգման, վերանորոգման, ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումները կազմում են 897.9 մլն դրամ: 2013թ. մարզում հիմնանորոգվել է 3.9 կմ տարբեր նշանակության ավտոճանապարհներ, ինչպես նաև իրականացվել է ճանապարհի փլուզված հատվածների վերականգնման աշխատանքներ:

Չնայած կատարված աշխատանքներին դեռևս կան ավտոճանապարհներ /պետ.խճուղի - Հրհեր-Կարմաշեն, պետ.խճուղի-Արտավան, Զառիթափ-Գոմք-Կապույտ, Վայք-Արին, Սերս-Բարձրունի, պետ.խճուղի-Զեդեա, Հ-86-Հորբատեղ, Մ-2-Գետափ, Հերմոն-Վարդահովիտ, Հերմոն-Գողթանիկ, Արփի-Մոզրով, պետ.խճուղի-Ելփին և Չիվա-Ռինդ ավտոճանապարհի 1.8կմ հատվածը/, որոնք գտնվում են անբարեկարգ վիճակում:
Մարզի տարածքում միջհամայնքային ուղևորափոխադրումները իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմաբիլային տրևանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների միջոցով, մրցութային կարգով:
,,Մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում և հանրակրթական դպրոցների տրանսպորտային ծառայությունների վճարներ,, ծրագրով կազմակերպվել է 12 երթուղիներում մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխման աշխատանքներ:
Մշտական հսկողություն է իրականացվել էլ.ցանցերի, կապի, հեռուստատեսության և ,,Հայփոստի,, բնագավառներում կազմակերպությունների կողմից բնակչության սպասարկման որակի բարելավման ուղղությամբ:
Մարզպետի կարգադրությամբ ստեղծվել է համատեղ հանձնաժողով /էլ. ցանցերի և կադաստրի ներկայացուցիչներից/ էլ. հաղորդման գծերի անվտանգության գոտիներում կառուցված շենք-շինություններ խախտումների ուղղությամբ, կատարվել է գույքագրում: Այժմ աշխատանքներ են տարվում նմանատիպ խախտումներ թույլ չտալու և այն վերացնելու համար:

<u>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ</u>

Վարչությունը իրագործում է բնակչության պետական սոցիալական ապահովության ծրագրերը: Սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության իրականացման ընթացքում ուշադրության կենտրոնում պահվում են կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց,

բազմազավակ ընտանիքների, պատերազմի վետերանների,զոհված ազատամարտիկների ընտանիքների, տարեցների և հաշմանդամների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, անտուն և անօթևան ընտանիքների սոցիալական պաշտպանության խնդիրները:

2013թ. զգալի աշխատանքներ են իրականացվել պետական նպաստների նշանակման ու վճարման գործընթացի բարելավման ուղղությամբ, հավաքագրվել է ամսեկան հաշվետվություններ, որոնք ամփոփվել և տեղադրվել են մարզպետարանի կայքում:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում փաստագրվել են 2669 ընտանիքներ՝

Եղեգնաձորի տարածաշրջան 1850 ընտանիք
Վայքի տարածաշրջան 528 ընտանիք
Ջերմուկի տարածաշրջան 291 ընտանիք

Մարզի 3 ՍԾՏԳ ների կողմից 2013 թվականին կատարվել են հետևյալ աշխատանքները.

Ցուցանիշներ /ցուցակային/	Եղեգնաձորի ՍԾՏԳ		Վայքի ՍԾՏԳ		Ջերմուկի ՍԾՏԳ		Ընդամենը մարզում	
	ընտանիք	գումարը	ընտանիք	գումարը	ընտանիք	գումարը	ընտանիք	գումարը
Ընտանեկան նպաստ	1445	467987500	431	144279500	212	67890000	2088	680157000
Երեխայի ծննդյան միանվագ նպաստ /50000/	404	20200000	154	7850000	67	3400000	625	31450000
Երեխայի ծննդյան միանվագ նպաստ/430000/	65	27950000	22	9460000	11	4730000	98	42140000
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ	144	33462000	68	17784000	39	9720000	251	60966000
Զոհված ՀՀ Հերոսի կամ մարտական խաչի շքանշանով պարգև. անձի ընտանիքի	0	0	0	0	0	0	0	0
Միանվագ օգնություններ								
Երեխայի ծննդյան միանվագ օգնություն	74	3700000	11	550000	2	100000	87	4350000

Երեխայի առաջին դասարան հաճախելու միանվագ օգնություն	151	3775000	40	1000000	14	350000	205	5125000
Ընտանիքի անդամի մահվան դեպքում	3	150000	0	0	0	0	3	150000
Հրատապ օգնություն	517	24848000	169	8032000	74	3552000	760	36432000

Շարունակվում է ավանդների փոխհատուցման աշխատանքները 2013թ դրությամբ ավանդի փոխհատուցում է տրվել 134 քաղաքացու:

Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացված միջոցների հասցեականության ապահովման և նպատակային օգտագործման ուղղությամբ: Պարբերաբար իրականացվել են հարակից բազաներից ստացվող տեղեկատվությունների և տեղական տեղեկատվական բազաների համադրման, մասնագետների տնային այցելությունների միջոցով ընտանիքների սոցիալական վիճակի ուսումնասիրությունների գործառույթները, որոնք որոշակիորեն նպաստել են ընտանեկան նպաստների հասցեականության և սպասարկման որակի բարելավմանը:

Տեղեկատվական բազաների համադրմամբ և կատարված ուսումնասիրությունների արդյունքով արձանագրված գերավճար գումարները սահմանված կարգով հետ է գանձվել պետական բյուջե:

2013թվական

ՍԾՏՄ	հետգանձման ենթակա	փաստացի հետգանձված/հազ,դրամ/	Մարված գումար	Մնացորդ
Եղեգնաձորի ՍԾՏՄ	3708.8	1125.3	2403.5	180.0
Վայքի ՍԾՏՄ	1989.5	729.5	1027.5	232.5
Վայոց ձորի ՄԱՐԶ	5698.3	1854.8	3431.0	412.5

Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններին կից գործել են հասարակական հիմունքներով գործող սոցիալական աջակցության խորհուրդները, որոնք համապատասխան որոշումներով ընտանեկան նպաստի համակարգից դուրս մնացած սոցիալապես անապահով 760 ընտանիքների նշանակվել են եռամսյակային դրամական օգնություն:

Մարզի երեք զբաղվածության տարածքային կենտրոններում 2013թ. գրանցվել են 736 գործազուրկներ, աշխատանքի են տեղավորվել 397 մարդ, գործազրկության մակարդակը մարզում կազմել է 4.9% : 2013թ. հունիսին Ջերմուկ քաղաքում կազմակերպվել է աշխատանքի տոնավաճառ ,որին մասնակցել են 28 գործատու և ներկայացվել է 69 առկա և 74 սպասվելիք թափուր աշխատատեղեր:

Մարզի զբաղվածության 3 կենտրոնների կողմից պետական ծրագրերի կատարման ընթացքը 2013թվականին.

h/h	Ծրագրի անվանումը	ժամկետը	մասնակցությունը /աշխատանք փնտրողներ, գործազուրկներ /	Ստացված արդյունքները / աշխատանքի տեղավորվածներ /
1	Գործազուրկների, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող աշխատանք փնտրողների, մասնագիտական ուսուցման կազմակերպում	Տարվա ընթացքում	81	35
3	Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցություն	Տարվա ընթացքում	9	9
4	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին	Տարվա ընթացքում	11	11
5	Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտրկայի կազմակերպումը գործատուի մոտ	Տարվա ընթացքում	11	9
6	Գործատուների մոտ աշխատանք փնտրող,չզբաղված հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցում	Տարվա ընթացքում	2	2
7	Աշխատանքի տեղավորվածները	Տարվա ընթացքում		397

Մարզում ապրում են 4165 հաշմանդամներ,որից 158 մանկուց հաշմանդամներ,177 1-ին խմբի ,1776 2-րդ խմբի և 2054 –ը 3-րդ խմբի հաշմանդամներ են :

38 հաշմանդամի հատկացվել է առողջարանային վերականգնողական ուղեգրեր:

Միջոցառումներ են ձեռնարկվել տրանսպորտի, սոցիալական ենթակառուցվածքների օբյեկտները և բնակելի շենքերը հարմարեցնելու հաշմանդամների պահանջներին: Հաշվետու շամանակաշրջանում 10 թեքահարթակներ են կառուցվել մարզի քաղաքային համայնքներում, հատկապես մեծ ուշադրություն է դարձվում նոր կառուցվող շինությունների նկատմամբ:

Հայրենական պատերազմի 33 վետերանների և Արցախյան Ազատամարտի 30 հաշմանդամների Նոր տարվա և Մայիսի 9-ի կապակցությամբ մարզպետարանի կողմից տրվել է դրամական աջակցություն,կազմակերպվել է համերգ և տոնական այլ միջոցառումներ:

Մարզի երեք ՍԱՏԲ-ներում հաշվառված են 10241 կենսաթոշակառուներ, ամսեկան միջին կենսաթոշակի չափը կազմել է 34.0 հազ. դրամ :

ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 9-ի N 947-Ն զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքներին <<Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին>> որոշմամբ բնակարանի կարիք ունեցող ընտանիքների ցուցակները ներկայացվել են ՀՀ ՊՆ: Հերթագրված է 44 զինծառայող ,որից 2013 թվականի ֆինանսական օգնություն է ստացել 6-ը :

2013թ. ընթացքում տեղի է ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Վայոց ձորի մարզային հանձնաժողովի 5 նիստ, որտեղ քննարկվել են մարզի հաշմանդամների հիմնախնդիրներին վերաբերվող հարցեր:

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի մոտ կայացած ընդունելության եկած 790 քաղաքացիների հատկացվել է դրամական օգնություն:

Կարևորվել է մարզում իրականացվող սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը, պետական նպաստների համակարգի, հաշմանդամների հիմնախնդիրների, սոցիալական պաշտպանության ոլորտի այլ իրավական ակտերի լուսաբանումը: 2013 թվականի ընթացքում 20 հոդված է տպագրվել մարզպետարանի պաշտոնական կայքում և <<Վարդաձոր>> թերթում :

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն

Ղեկավարվելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից 2010թ. օգոստոսի 21-ի թիվ 80 որոշմամբ հաստատված կանոնադրությամբ, բաժնին վերապահված գործառույթների պահանջներով հաշվետու ժամանակահատվածում /2013թ հունվար-դեկտեմբեր/ բաժինն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում՝ համայնքների ղեկավարների մասնակցությամբ բացահայտել է մարզում բազմազավակ և բազմանդամ ընտանիքների վերաբերյալ տվյալները, թարմացվել 2013 թվականին մարզում ծնված և մահացած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվական բազան, կատարել կարիքների գնահատում և կարիքների տեսակավորում:
2. Գենդերային հիմնահարցեր

ա/ գենդերային հարցերով մշտական հանձնաժողովը տարվա ընթացքում հրավիրել է 4 նիստ, կազմվել է համապատասխան արձանագրություն:

բ/ մարզի 14 համայնքներում ավագանու որոշմամբ նշանակվել են գենդերային հարցերով զբաղվող անձինք, իսկ քաղաքային համայնքերում՝ հանձնաժողովներ:

գ/ մարզում բոլոր խոշոր համայնքներում կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ կառավարության գենդերային քաղաքականության և ՀՀ 2013թ հունիսի 11-ի << Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին>> օրենքի դրույթների լուսաբանման ուղղությամբ

գ/ 2013թ. մարզային խորհրդում քննարկվել են մարզում իրականացվելիք գենդերային ուղղվածության խնդիրներ

3. Ոստիկանության տարածքային բաժինների հետ համագործակցության շնորհիվ մարզում բացահայտվել է երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող ծնողների առկայությունը: Բացահայտվել է երեխաների կյանքին և առողջությանն սպառնացող վտանգի 4 դեպք, երեխաների նկատմամբ սահմանվել է խնամակալություն և հոգաբարձություն՝ մեկուսացնելով ծնողից:
4. 2013թ. ծնողների միջև ծնողական իրավունքի իրականացման համար ծագած տարաձայնությունների 2 դեպքերը լուծվել են հօգուտ երեխայի:
5. Մարզում հաշվառված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 227 երեխա, 2013 թվականին կատարվել է 22 երեխայի կարիքի գնահատում և գրանցվել <<Նորք>> տեղեկատվական կենտրոնում, թարմացվել է 10 երեխայի վերաբերյալ տեղեկատվական փաթեթը:
6. Մարզում առ 01.12.2013թ. խնամակալություն և հոգաբարձություն է սահմանվել 44 երեխայի նկատմամբ, որից 10-ի նկատմամբ 2013 թվականին. կատարվել է կարիքի

գնահատում, կազմվել սոցիալ-հոգեբանական անհատական ծրագիր, գրանցվել ԱԾԽՄ երեխաների գրանցամատյանում, վերցվել կենտրոնացված հաշվառման, պայմաններ ստեղծվել սոցիալական աջակցության համար:

Բաժինը համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքներին աջակցելու համար կազմակերպել է սեմինար, տրամադրել մեթոդական գրականություն և համապատասխան փաստաթղթերի փաթեթ: 5 համանքներում կազմակերպվել է մոնիթորինգ:

7. 2012թ. որդեգրման համար բաժին է դիմել է 2 քաղաքացի: Ուսումնասիրության և ներկայացված փաստաթղթերի իրավական հիմքերի բացակայության պատճառով դիմումները մերժվել են:
8. Մարզում թափառաշրջիկներ, մուրացիկներ և հանցագործություն կատարած երեխաներ չկան: 2013թ. ընթացքում ոստիկանության տարածքային բաժինների կողմից հաշվառման է վերցվել 9 անչափահաս: Առ 30.12.2013թ. հաշվառման մեջ է մնացել 8-ը, որոնց նկատմամբ կատարվել են պրոֆիլակտիկ կանխարգելման դաստիարակչական աշխատանքներ, սահմանվել հսկողություն, նշանակվել շեֆ դաստիարակներ, լուծվել կողմնորոշման և տեղավորման, զբաղվածության խնդիրներ, կազմակերպվել հանդիպումներ ծնողների հետ:
9. 2013 թվականի ընթացքում Երևանի բժշկամանկավարժահոգեբանական /ԲՄՀ/ գնահատման կենտրոնի եզրակացության հիման վրա վկայագրվել է 13 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, վերավկայագրվել է 16-ը: 2013-2014թթ. ուս-տարվա ընթացքում մարզի ներառական կրթություն իրականացնող 3 հանրակրթական դպրոցներում սովորում են վկայագրված 88 երեխաներ: 3 հաշմանդամ երեխաների հետ ուսուցումը կազմակերպվում է տնային պայմաններում: Հանրապետության հատուկ դպրոցներում սովորում են վկայագրված 9 երեխաներ: 2009-2013թթ. բաժնի կողմից վկայագրվել է 146 երեխա: Մարզում հանրակրթությունից դուրս մնացած դպրոցահասակ երեխաներ չկան:
10. Մարզի ԱԾԽՄ 15 երեխաներ գտնվում են մանկատներում, որից 11-ը՝ Կոտայք գյուղի ՍՕՍ մանկական գյուղում, 2-ը՝ Գյումրիի ‹‹ Երեխայի տանը ››, 1-ը՝ Խարբերդի մանկատանը, 1 երխա՝ Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը: Ղ. Ալիշանի անվան № 95 գիշերօթիկ դպրոցում սովորում են 2 երեխաներ:
11. Բաժինը համագործակցում է իրավապաշտպան մարմինների հետ, հանդես գալիս երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով, գործում համատեղ կազմված ծրագրերով:
12. Բաժինը սերտորեն համագործակցում է երեխաների հիմնահարցերով և իրավունքների ու շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների /‹‹Շուշան››, ‹‹Աշխատանք և հայրենիք››, ‹‹Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն››, ‹‹Սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն››, ‹‹ՀՕՄ››-ի Եղեգնաձորի մասնաճյուղի, ‹‹Հույս 98››, ‹‹Երիտասարդ սերունդ›› / հետ, մասնակցելով նրանց կազմակերպած միջոցառումներին, օգտագործում նրանց ուժերն ու հնարավորությունները:
13. Մարզի 23 քաղաքացիներից ստացված դիմումներին բաժինը ժամանակին սահմանված կարգով տվել է ընթացք և լուծում:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, այդ թվում 15 հիմնական և 35 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան, 3-ը ավագ դպրոց ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, 5-ը՝ բարձր լեռնային բնակավայրերում:

Մարզային ենթակայությամբ գործող 47 դպրոցներում սովորում է 5736 աշակերտ, որոնք կոմպլեկտավորված են 464 դասարաններում: Մարզի սահմանափակ կարողություններ ունեցող 46 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են Եղեգնաձորի թիվ 2 և Վայքի հիմնական դպրոցներում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար: Համայնքների ղեկավարների, մարզի վիճակագրական ծառայության և ՋԱԳՍ-ի բաժինների հետ համագործակցելով իրականացվում է դպրոցահասակ տարիքի երեխաների հաշվառումը, ինչի արդյունքում մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

Մարզային ենթակայության 47 դպրոցներում աշխատում են 1021 ուսուցիչներ, որոնցից 752-ը ունեն բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն (80%-ը), մնացած 269-ը՝ միջնակարգ մասնագիտական:

ՈՒսուցիչ - աշակերտ հարաբերակցությունը կազմում է 5,6:

Դասարանի միջին խտությունը 12,3 - է:

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 16,1 ժամ:

Բոլոր դպրոցներն ապահովված են համակարգիչներով, որոնք օգտվում են ինտերնետ կապից:

Տարբեր առարկաների գծով վերապատրաստվել և ատեստավորվել են 186 ուսուցիչներ: Մարզի հանրակրթական բոլոր դպրոցներում հաջողությամբ ներդրվել է շախմատի ուսուցումը: Այդ նպատակով բոլոր դպրոցներն ապահովվել են անհրաժեշտ գույքով:

Ձևավորվել և իրենց լիազորությունների սահմաններում գործում են դպրոցների կառավարման խորհուրդները, որոնց անվանական կազմը 2012թ. հոկտեմբերի 12-ին հաստատվել է Վայոց ձորի մարզպետի որոշմամբ: 2013թ. կրթության պետական տեսչության կողմից մարզի 21 դպրոցներում կատարվեցին ուսումնադաստիարակչական աշխատանքների տեսչական համալիր ուսումնասիրություններ և բարձր դասարանների աշակերտների շարժը: ՈՒսումնասիրությունների արդյունքում կազմվեց ամփոփիչ արձանագրություն, որը ամենայն մանրամասնությամբ քննարկվեց դպրոցների տնօրենների ընդլայնված խորհրդակցությունում: Քննարկումից հետո կատարված խախտումները վերացնելու և արձանագրված թերությունները շտկելու համար դպրոցների տնօրեններին տրվեցին գրավոր հանձնարարականներ: Տրված հանձնարարականները կատարվել են ժամանակին ու պատշաճ ձևով, որի մասին դպրոցների տնօրենները գրավոր տեղեկացրել են կրթության պետական տեսչությանը:

Ապահովված է դպրոցական շենքերի պահպանությունը: 2013թ. ՀՀ պետբյուջեի ֆինանսավորմամբ 29 478 հազ. դրամի հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել Մալիշկայի թիվ 2, Զառիթափի, Գոմքի միջն. և Եղեգնաձորի երաժշտական դպրոցներում: Մարզի 17 դպրոցներ ջեռուցվում են գազի լոկալ կաթսայատան միջոցով, մնացածները՝ էլեկտրական տեներով:

Ամբողջությամբ լուծված է աշակերտների դասագրքերով ապահովվածության խնդիրը, որոնց վարձավճարները հավաքագրվել են 90 տոկոսով, հավաքագրումը շարունակվում է:

Օլիմպիադայի մարզային փուլին մասնակցել են շուրջ 800 աշակերտ, որոնցից 35-ը մասնակցել են հանրապետական փուլին: Նրանցից 20-ը պարգևատրվել են գովասանագրերով և դիպլոմներով:

Աշխատանքներ են տարվում դպրոցական գույքը թարմացնելու, ժամանակակից լաբորատոր սարքավորումներ ձեռք բերելու ուղղությամբ:

Մարզում գործում է համայնքային ենթակայության 17 մանկապարտեզ, որոնցում ընդգրկված են 805 երեխաներ: Ցավոք մի շարք համայնքներում չկան նախադպրոցական հիմնարկներ, ինչի հետևանքով այդ համայնքներում անլուծելի է մնում նախադպրոցական կրթության, որպես միջնակարգ կրթության նախապատրաստման կարևորագույն օղակի, խնդիրը:

Մարզի 23 համայնքներում բացվել են նախակրթարաններ, այդ թվում 13-ը դպրոցներում, որոնցում ընդգրկվել են 4-5 տարեկան 165 երեխա 13 խմբով:

Գործում են մարզային և համայնքային ենթակայության 46 գրադարան, 31 մշակույթի տուն, 3 արվեստի, 1 գեղարվեստի և 2 երաժշտական դպրոց, 2 թանգարան և 2 մանկական ստեղծագործական կենտրոններ, պատկերասրահի 2 մասնաճյուղ:

Մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքում գործում է մարզային ենթակայության մշակույթի տուն, երաժշտական դպրոց և երկրագիտական թանգարան: Մարզի մշակութային և ստեղծագործական կոլեկտիվները հաջողությամբ մասնակցում են հանրապետական և մարզային մշակութային փառատոներին, մրցույթներին:

Մարզի մշակութային կյանքին աշխուժություն է հաղորդում տուրիզմի զարգացման արդեն զգացվող միտումները, որին մեծապես նպաստում են մարզի տարածքում առկա պատմամշակութային արժեք ներկայացնող վանական և եկեղեցական համալիրները, որոնց պահպանության համար ձեռնարկված են բոլոր անհրաժեշտ միջոցները:

Մշակութային կյանքից ետ չի մնում սպորտն ու երիտասարդության հետ տարվող աշխատանքները: Տարվա ընթացքում կազմակերպվել են սպորտային տարբեր միջոցառումներ, որոնց մասնակցում են մարզի բոլոր համայնքների ներկայացուցիչները:

Համայնքային ենթակայությամբ գործում են 3 մարզադպրոցներ և մշակույթի նախարարության ենթակայությամբ երիտասարդական կենտրոն: Մարզի 3 քաղաքներում գործում են Հայաստանի Շախմատի ակադեմիայի մասնաճյուղեր: Մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքում կառուցվել է լողավազան, որը հրաշալի նվեր է մարզի պատանիների ու երիտասարդների համար:

Հանրապետական և միջազգային մրցումներում թեև համեստ են մարզի նվաճումները, սակայն զգացվում է դրանք զարգանալու ակնհայտ միտումներ:

ՏԻՄ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգում

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ, ապահովվել է մարզի կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների, զինկոմիսարիատների, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ :

Ապահովվել է տարածքային ծառայությունների մասնակցությունը մարզպետարանում, կազմակերպված խորհրդակցություններին , որտեղ վերջիններիս ուշադրությունը հրավիրվել է մարզում ծագած խնդիրների լուծման անհրաժեշտության վրա :

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներից վարչությունը սահմանված կարգով

ստացել է մարզպետարանի առջև ծառացած գործառույթների ու խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն :

Համակարգվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարված աշխատանքները :

ՏԻՄ օրենքի պահանջների կատարման նպատակով աշխատանքներ են տարվել ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու, որոշումները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ :

Համակարգվել է ՀՀ Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող մարզի ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումները մարզպետի պահանջով վերանայելու գործընթացը:

Վարչությունը համագործակցված աշխատանքներ է տարել ՀՀ Նախագահի և ՏԻՄ ընտրությունների կազմակերպման ուղղությամբ .

համակարգվել են Գնիշիկի ավագանու անդամների ընտությունների ուղղությամբ տարվող աշխատանքները :

Համակարգվել են համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները:

Համակարգվել են զորակոչի , զորահավաքի և վարժական հավաքների անցկացման աշխատանքները :

ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն վարչական հսկողություն է իրականացվել մարզի Անջաձորի, Նոր Ազնաբերդի, Ագարակաձորի, Գլաձորի, Խաչիկի, Գոմքի, Զառիթափի, Չիվայի, Գողթանիկի, Հերմոնի համայնքներում :

Հսկողության ժամանակ արձանագրվել են թերություններ և բացթողումներ <<Տեղական ինքնակառավարման մասին>> , <<Համայնքային ծառայության մասին>> , <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքների պահանջների կատարման ուղղությամբ :

Թերությունների և բացթողումների վերաբերյալ կազմվել են ակտեր , քննարկվել և սահմանվել են ժամկետներ թերությունների վերացման ուղղությամբ : Համայնքների ղեկավարների կողմից ներկայացվել է տեղեկատվություն թերությունների շտկման կապակցությամբ :

Հետևողական աշխատանքներ են տարվել տեղական ինքնակառավարման մարմիններում գործավարության վիճակը բարելավելու ուղղությամբ :

Հայտնաբերվել են թերություններ ու բացթողումներ Տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքների պահանջների կատարման ուղղությամբ : Կազմակերպվել են քննարկումներ բացահայտված թերությունների վերացման կապակցությամբ . ցուցաբերվել է մեթոդական , խորհրդատվական օգնություն:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ : Համայնքներում ավագանու կողմից կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն և հանդիպում համայնքի բնակչության հետ :

Ընթացիկ տարում համակարգվել են ՏԻՄ-երում առևտրի , հանրային սննդի և սպասարկման բնագավառներում կազմակերպվող աշխատանքները, որոնց արդյունքների վերաբերյալ տարածքային կառավարման նախարարություն ներկայացվել են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ :

Մարզի համայնքներում համայնքային ծառայության 21 թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ, որոնց արդյունքում հաղթող են ճանաչվել և համայնքային ծառայության պաշտոններում նշանակվել են 17 քաղաքացի :

Մարզի համայնքներում վերապատրաստվել են 27 համայնքային ծառայողներ: Վերապատրաստում անցած 6 համայնքային ծառայողներ հաշվետու ժամանակաշրջանում ատեստավորվել են:

Հետևողական աշխատանքներ են տարվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մարզի Ջերմուկի քաղաքապետարանի և Խաչիկի, Ազատեկի, Գնիշիկի, Թառաթումբի, Հորսի, Արինի, Փոռի գյուղապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ :

Հաշվետու ժամանակաշրջանում հազարից ավելի բնակչություն ունեցող մարզի 19 համայնքներից 17-ում հետևողական աշխատանքների արդյունքում ներդրվել է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ :Վերջինիս շնորհիվ մարզի 12 համայնքներում ապահովված է կապը Mulberry համակարգի հետ:

Վարչությունը ապահովել է մարզի ՏԻՄ-երի և մարզպետարանի աշխատակազմի փոխհարաբերությունները .

-կազմակերպվել են խորհրդակցություններ, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման և ստացման աշխատանքները,

-ապահովվել է մարզխորհրդի նիստերին ՏԻՄ-երի մասնակցությունը :

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ : Այդ նպատակով մարզի բոլոր համայնքներում տեղադրվել են ցուցատախտակներ, որոնց միջոցով համայքների ազգաբնակչությունը իրազեկվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ :

Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ : Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները :

<u>Ֆինանսներ և սոց. տնտ. Զարգացում-2013 թ.</u>

“ՀՀ 2013թ. պետական բյուջեի մասին” ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետարանի ապարատի և մարզային ենթակայության կազմակերպությունների տարեկան ճշտված պահպանման ծախսեր են նախատեսվել է 2504812.0 հազ. Դրամ որի դիմաց փաստացի ֆինանսավորվել է՝ 22463505.3 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 98.35%_ով:

Գործադիր իշխանության տարածքային կառավարման մարմինների պահպանում:

Վայոց ձորի մարզպետարան ծրագիր՝ 01-01-01-03

ՀՀ 2013թ. պետական բյուջեով նախատեսվել է 224505.2 հազ.դրամ պահպանման ծախսեր, որի դիմաց փաստացի ծախսերը կազմել են՝ 214476.29 հազ.դրամ, ֆինանսավորվել է՝ 95.5 %-ով:

Տնտեսագիտական դասակարգման առանձին հոդվածներով խնայողությունը կազմել է 10028.91հազ.դրամ:

- Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

- Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում ծրագիր 04-05-01-06

ՀՀ 2012թ. ճշտված պետական բյուջեով նախատեսվել են ծախսեր՝ գումարով 65422.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է՝ 65422.0 հազ.դրամ, ֆինանսավորվել է 100 %-ով:

- Կրթության ոլորտ

- Հանրակրթական ուսուցում ծրագրեր՝ 09-01-02-01, 09-02-01-02, 09-02-02-02

ՀՀ 2013թ. ճշտված պետական բյուջեով նախատեսվել է Վայոց ձորի մարզպետարանին 1549184.6հազ.դրամ, ֆինանսավորվել է՝ 1533421.5 հազ. դրամ կամ կատարվել է 100 %-ով:

- Ներառական կրթություն ծրագրեր՝ 09-01-02-05, 09-02-01-06, 09-02-02-06

ՀՀ 2013թ. ճշտված պետական բյուջեով նախատեսվել է Վայոց ձորի մարզպետարանին 25264.3հազ.դրամ, ֆինանսավորվել է՝ 25264.3 հազ. դրամ կամ կատարվել է 100 %-ով:

_Նախադպրոցական կրթություն ծրագիր՝ 09-01-01-01

ՀՀ 2013թ. Պետական բյուջեով նախատեսվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին նախատեսվել է 17521.8 հազ. դրամ, ֆինանսավորվել է 166237 հազ. Դրամ, ֆինանսավորվել է 94.9%-ով, տարբերության գումարի նչափով Արինի դպրոցում նախադպրոցական ուսուցում չի կազմակերպվել:

- Հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայության մատուցում ծրագիր՝ 09-06-01-14

ՀՀ 2013թ. ճշտված պետական բյուջեով նախատեսվել են ծախսեր՝ գումարով 13835.0հազ.դրամ, որի դիմաց փաստացի ֆինանսավորվել 13835.0 հազ.դրամ : Ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

- Արտադպրոցական դաստիարակություն

/ Եղեգնաձորի երաժշտական դպրոց 09-05-01-01 ծրագրով մարզի Եղեգնաձորի □Երաժշտական դպրոց ՊՈԱԿ-ին ՀՀ 2012թ. պետական բյուջեով նախատեսվել են 26687.1 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 100%-ով:

- Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցում

09-05-01-04 ծրագրով Վայոց ձորի մարզպետարանին հատկացվել է 13925.8հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 13925.8 հազ. Դրամ, ֆինանսավորվել է 100 %-ով:

- Կրթական օբյեկտների հիմնանորոգում

09-06-01-03 ծրագրով ՀՀ 2013թ. պետական բյուջեով նախատեսվել են 41952.9 հազ.դրամ ծախս, որի դիմաց ֆինանսավորվել է 39492.93հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 94.1 %-ով:Տարբերությունը կազմում է 2459.97հազ. դրամ, որը 2009թ.կնքված նախնական պայմանագրից ավել նախատեսվախ և ֆրիանսավորված գումարն է և հետ է վերադարձվում պետական բուջե:

- Մշակույթի ոլորտ

- Թանգարանային ծառայություններ և սուբսիդիա

08-02-02-01 ծրագրով ՀՀ 2013թ. պետական բյուջեով Եղեգնաձորի երկրագիտական թանգարան ՊՈԱԿ-ի պահպանման ծախսեր են նախատեսվել 10297.3 հազ.դրամ, ֆինանսավորվել է 100 %-ով:

- Համայնքի մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում /սուբսիդիա/

08-02-03-02 ծրագրով □Եղեգնաձորի մշակույթի տուն□ ՊՈԱԿ-ին ՀՀ 2012թ. պետական բյուջեով նախատեսվել է 3745.0 հազ.դրամ , ֆինանսավորվել է 100.0%-ով:

- Մշակութային միջոցառումների իրականացում

08-02-05-04 ծրագրով Վայոց ձորի մարզպետարանին 2010թ. պետական բյուջեով նախատեսվել են ծախսեր 4938,5 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 4938.5 հազ.դրամ ֆինանսավորվել է 100%-ով:

- Հիմնական խմբին չդասվող ծախսեր
- ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ ծրագիր՝ 11-01-01-01

ՀՀ 2013թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախատեսվել է հատկացնելու 332048.5 հազ.դրամ
փաստացի ֆինանսավորվել է 331764.72 հազ.դրամ ֆինանսավորումը կատարվել է 99.9%-ով տարբերությունը կազմում է 283.78 հազ.դրամ,որը հրատապ ծրագրով հատկացված գումարի շրջանակներում մրցույթի արդյունքում տնտեսված գումարն է;

2013թ.-ին մարզի 44 համայնքների տեղական բյուջեներով՝ տարվա ընթացքում կատարված ճշտումներով ընդամենը եկամուտներ են նախատեսվել 1310596.6 հազ.դրամ, տեղական բյուջեներին ամրագրված եկամուտներից հավաքագրվել է 1320229.3 հազ.դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումը կատարվել է՝ 100.7 %-ով:

Տեղական բյուջեների տարեսկզբի դրամական մնացորդը վարչական և ֆոնդային բյուջեների գծով ընդամենը կազմել է 19847.7 հազ.դրամ, Ընդամենը հարկեր և տուրքեր են նախատեսվել 174917.0 հազ.դրամ, ոչ հարկային եկամուտներ են նախատեսվել 256002.0 հազ.դրամ: Համահարթեցման կարգով ՀՀ 2013թ. պետական բյուջեից մարզի համայնքներին հատկացվել է 745479.0 հազ.դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Հարկային եկամուտների, տուրքերի և ոչ հարկային եկամուտների մասով հաշվետու տարում համայնքների բյուջեներով նախատեսվել է՝

- Հողի հարկ՝73102.3 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 72627.9 հազ.դրամ, կամ կատարվել է 99.3%-ով:
- Գույքահարկ՝ 105453.4 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 116222.5 հազ.դրամ, կամ կատարվել է 110.2 %ով:
- Պետական տուրքեր 7550.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 5633.7 հազ.դրամ, կամ կատարվել է 74.6%_ով

Տեղական տուրքեր 16285.9 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 116677.6 հազ.դրամ, կամ կատարվել է 102.4%:

- Համայնքների սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև նրանց վարչական սահմաններում գտնվող պահուստային հողերի , գույքի վարձակալության և արոտի վարձավճարներ են նախատեսվել 175237.0 հազ.դրամ, որի դիմաց հավաքագրվել է 184342.1 հազ.դրամ, կամ կատարվել է 105.2 %-ով:

- Տեղական վճարներ են նախատեսվել 3025.7 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 2428.5 հազ.դրամ, կամ կատարվել է 80.3 %-ով:

- Այլ ոչ հարկային եկամուտներ են նախատեսվել 78159.3 հազ.դրամ, փաստացի գանձվել է 76766.6 հազ.դրամ, կամ կատարվել է 98.2 %-ով:

ով:

- 2013թ. ընթացքում նախատեսվել է պատվիրակված լիազորություններ 14115.8հազ.դրամ, որի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 14296.2 հազ.դրամ, կամ ֆինանսավորվել է 101.3 %-ով:

- 2013թ. ընթացքում մարզի 10 համայնքներում կատարված վարչական և ֆինանսական հսկողության արդյունքներով արձանագրված թերություններն ու խախտումները քննարկվել են մարզպետարանում, առաջարկվել է համայնքների ղեկավարներին ավագանու նիստերում քննարկվել արձանագրված թերությունների և խախտումների վերաբերյալ հարցը, մշակել կոնկրետ միջոցառումներ նշված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ, մարվել են կուտակված աշխատավարձի և սոց. վճարների պարտքերը:

2013թ. ընթացքում մարզի 30 կազմակերպություններում և մարզպետարանի 9 ստորաբաժանումներում կատարվել է ներքին աուդիտի աշխատանքներ :

Համայնքների բյուջեների կատարման վերլուծություն
/ 2011-2013թթ/

- **Սեփական եկամուտներ են հավաքագրվել**
  -2011թ-ին 277593 հազ.դրամ, կատարվել է 110.6%-ով
  - 2012թ-ին 278543 հազ.դրամ, կատարվել է 99.2%-ով
  -2013թ-ին 474699 հազ. դրամ. Կատարվել է 104.3%-ով
  2012թ. համեմատությամբ սեփական եկամուտներն աճել են 34.5%-ով
  Տարեկան բյուջեներին ամրագրվող ընդամենը եկամուտներըհավաքագրվել են-
  - 2011թ-ին 100.2%
  - 2012թ-ին 99.5 %
  -2013թին 100.7 %
- **Մարզի համայնքներին ամրագրվող ընդամենը եկամուտները կազմել են՝**

- 2011թ-ին 116042.3 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 1162985.6 հազ.դրամ, կատարվել է100.2 %-ով:

- 2012թ-ին 1131985.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 11225911.0հազ.դրամ, կատարվել է 99.5%-ով:

-2013թ-ին 1310596.6 հազ. դրամ., փաստացի հավաքագրվել է 1320229.3 հազ. դրամ. Կատարվել է 100.7%-ով:

Տարեսկզբի դրությամբ աշխատավարձի և սոց.վճարների նախորդ տարիների կուտակված պարտքերը չեն եղել, 2013թ.ընթացքում ընթացիկ պարտքեր չեն կուտակվել:

-Ֆինանսների բնագավառում ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից 2013 թվականի կատարված աշխատանքների լիարժեքության գնահատման ցուցանիշը կազմել է

Հողի հարկի և գույքահարկի գծով ապառքներ են հավաքագրվել

-2011թ-ին 34230.0 հազ.դրամ
-2012թ-ին 25124.5 հազ.դրամ
-2013թ-ին24620.4 հազ. դրամ
□2013թ.հավաքագրվել է 14507.2հազ. դրամ գումարով հողի հարկի ապառք, գույքահարկի ապառք՝ 10113.2 հազ. դրամ:

-Հաշվետու ժամանակաշրջանում կենսաթոշակ է հաշվարկվել և վճարվել մարզի կենսաթոշակառուներին 3738.0 մլն.դրամ

- Նպաստառու ընտանիքներին հաշվարկվել և վճարվել է 680.2 մլն.դրամ ընտանեկան նպաստ:

- 2013թ. ընթացքում պետական պատվերի շրջանակներում կատարվել է 480043.7 հազ.դրամի բժշկական ծառայություններ, որի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 480043.7 հազ.դրամ, կամ ֆինանսավորվել է 100.0 %-ով:

ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ցուցանիշներ				Վայոց ձոր
Համայնքի սեփական եկամուտները	**Մարզի միջինը /%/**		2012թ.	110.6%
			2011թ.	99.2%
			2012թ.	103.4
	Հավաքագրումը նվազել է	Համայնքների թիվը	2012թ,2011թ նկատմամբ	14
			2013թ 20112թ նկատմամբ	
Ոռոգման ջրի վարձավճարներ հավաքագրումի մեկ.դրամ*	2013թ			89.4
	2012թ			88.4
	2011թ			83.9
Խմելու ջրի վարձավճարներ հավաքագրումի մեկ.դրամ	2013թ			199.9
	2012թ			179.92
	2011թ			153.99
Հողօգտագործում	Համայնքի վարչական սահմաններում /հա/	Ընդամենը /հա/		
		տրվել է վարձակ.	2012թ	5887
			2013թ	7340
		գանձվել է %	2012թ	102.1
			2013թ	105.2
	Համայնքի վարչական սահմաններից դուրս /հա/	Ընդամենը /հա/		
		տրվել է վարձակ.	2013թ	1995.7
			2012թ	1243
		գանձվել է %	2012թ	100.0
			2013թ	100.0
Ընդերքի օգտագործում	Շահագործող կազմակերպությունների թիվը		2013թ	12
			2012թ	12
	որից	ունեն հողհատկացում	2013թ	12
			2012թ	12
		ունեն լիցենզիա	2013թ	12
			2012թ	12
Աղտոտումներ	ընդամենը ձևավորված		2013թ	

				0
	գործող		2013թ	0
			2012թ	0
Առողջապահություն	պետ.պատ.շրջանակ. տրվել է /մլն.դրամ/		2012թ	475.0
			2013թ	485.2
	մատուցվել է վճարովի բուժ.ծառայություն,ախդ թվում համավճարը մլն.դր		2012թ	41.9
			2013թ	49.2
	բուժ.հիմնարկներում փոփոխված ղեկավարների թիվը		2012թ	0
			2013թ	3
Կրթություն	մանկավարժական կադրերի պահանջարկը /սահմանամերձ գյուղական բնակավայրերում/		2012թ	5
			2013թ	0
	փոփոխվ.դպր. տնօրենների թիվը		2012թ	2
			2013թ	3
Սոցիալական ոլորտ				
	Գործազուրկների թիվը	Ընդամենը	2012թ	753
			2013թ	759
		գյուղական բնակավայրերում	2012թ	115
			2013թ	117

ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՅՈՅԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ցուցանիշներ				Վայրոց ձոր
Համայնքի սեփականությունը	**Մարզի միջինը /%/**		2010թ.	96.7%
			2011թ.	100.9%
			2012թ.	99.2
	Հավաքագրումը նվազել է	Համայնքների թիվը	2011թ,2010թ նկատմամբ	3
			2012թ 2014թ նկատմամբ	14
Ջրի վարձակալության	2012թ			88.4
	2011թ			83.9
	2010թ			82.1
Գազամատակարարման վարձակալության	2012թ			179.92
	2011թ			164.3
	2010թ			153.99
Հողօգտագործում	Համայնքի վարչական սահմաններում /հա/	Ընդամենը /հա/		
		տրվել է վարձակ.	2011թ	5884
			2012թ	5887
		գանձվել է %	2011թ	154.6
			2012թ	102.1
	Համայնքի վարչական սահմաններից դուրս /հա/	Ընդամենը /հա/		
		տրվել է վարձակ.	2012թ	1243
			2011թ	0
		գանձվել է %	2012թ	100.0
			2011թ	0
Ընդերքի օգտագործում	Շահագործող կազմակերպությունների թիվը		2012թ	12
			2011թ	12
	որից	ունեն հողհատկացում	2012թ	12
			2011թ	12
		ունեն լիցենզիա	2011թ	12
			2012թ	12
Համայնքային վարչություններ	ընդամենը ձևավորված		2011թ	0
			2011թ	0
	գործող		2012թ	0
			2011թ	0
Առողջապահություն	պետ.պատ.շրջանակ. տրվել է /մլն.դրամ/		2011թ	485.5
			2012թ	475.0
	մատուցվել է վճարովի բուժ.ծառայություն		2011թ	43.8
			2012թ	41.9
	բուժ.հիմնարկներում փոփոխված ղեկավարների թիվը		2011թ	0
			2012թ	0
Կրթություն	մանկավարժական կադրերի պահանջարկը /սահմանամերձ գյուղական բնակավայրերում/		2011թ	9
			2012թ	5
	փոփոխվ.դպր. տնօրենների թիվը		2011թ	9
			2012թ	2
	Վարձատրվող հասարակական աշխատանք	հատկացվել է /մլն.դրամ/	2012թ	0
Սոցիալական		իրացվել է /մլն.դրամ/	2012թ	0
		ծրագրերի թիվը	2012թ	0
		մասնակցել է /մարդ/	2012թ	0

- 2012թ. ընթացքում պետական պատվերի շրջանակներում կատարվել է 474963.7.0 հազ.դրամի բժշկական ծառայություններ, որի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 474963.7հազ.դրամ, կամ ֆինանսավորվել է 100.0 %-ով:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բնագավառ

Հանրային իրազեկումը Վայոց ձորի մարզպետարանի աշխատանքային ծրագրի մաս է կազմում և կոչված է հիմնականում լուսաբանելու այդ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները, գործընթացները և դրանց արդյունքում սպասվող ակնկալիքներն ու ձեռքբերումները:

2013 թվականի հունվար դեկտեմբեր ամիսներին մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվելով բաժնի կանոնադրությամբ և բաժնին վերապահված գործառույթների, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրի պահանջներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Այլ կայքերով և ԶԻՄ-ներով լուսաբանման աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության հանրային իրազեկումըմարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից իրականացվել է <<Միասնական տեղեկատվական հարթակ>>-ի, մարզային <<Վարդաձոր>>, <<ԱգրոԿամուրջ>> ամսաթերթի, <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթի, <<armenpress.am>>, <<aravot.am>>, <<panorama.am>>, <<report.am>>, <<mardik.am>> էլեկտրոնային կայքերի, ինչպես նաև <<Հանրային>>, <<Ազատություն>> լրատվական գործակալությունների, Հ1, Հ2 Կենտրոն հեռուստաընկերությունների լրատվական ծրագրերի միջոցով:

ՎՁՄ կայքէջի <<Նորություններ>> բաժին

Մարզպետի գործունեության հրապարակայնությանն են ուղղված եղել նաև պաշտոնական կայքի <<Նորություններ>> բաժնի նյութերը: 2013թ. ընթացքում մարզպետարանի <<Նորություններ>> բաժնում տեղադրվել են 384 լուսաբանական նյութեր: Ինտերնետային կայքի <<Նորություններ>> բաժնում տեղադրված նյութերը լրատվական բնույթի հաղորդումներ են:

Հաշվետու ժամանակահատվածում նշված բաժնում բացվել են ենթաբաժիններ՝ <<Ելույթներ և հարցազրույցներ>>, <<Ուղերձներ>>, << Մարզպետի պաշտոնական և աշխատանքային այցեր, ընդունելություններ>>, <<Մարզպետի տեղակալների ելույթներ և հանդիպումներ, պաշտոնական և աշխատանքային այցեր>>, <<Տոներ և հիշատակի օրեր>> և համալրվել են համապատասխան նյութերով:

ՎՁՄ կայքէջի այլ բաժիններ

Պարբերաբար թարմացվել է կայքի բոլոր բաժինների նյութերը:

Վայոց ձորի մարզպետարանի ինտերնետային կայքի <<Մարզպետարան>> բաժնի <<Մարզխորհրդի նիստերի օրակարգեր>> ենթաբաժնում նախապես տեղադրվել են Վայոց ձորի մարզպետարանի կողմից 2013 թվականին տեղի ունեցած 5 նիստերի օրակարգերը, <<Արձանագրություններ>> ենթաբաժնում՝ տվյալ նիստերի արձանագրությունները, իսկ <<Նորություններ>> բաժնում 3-5 օր առաջ տեղադրվել են նիստերին վերաբերող տեղեկատվությունները՝ նախ՝ օրակարգ, անցկացման ժամ և վայր, իսկ նիստի կայանալուց հետո՝ լուսաբանող տեղեկատվություն:

Վայոց ձորի մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքի <<Իրավական ակտեր>> բաժնում տեղադրվել են Վայոց ձորի մարզպետի կողմից ընդունված որոշումները և կարգադրությունները, <<Հաշվետվություններ>> ենթաբաժնում՝ մարզպետի ընթացիկ

հաշվետվությունները, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ընթացիկ հաշվետությունները:

<<Մարզպետարան>> բաժնում բացվել են նաև <<Գնումներ>>, <<Ստուգումների արդյունքներ>>, <<Համագործակցություն>>, <<Հեռախոսահամարներ>> <<Դատական գործերի տեսություն>>, <<Պայմանագրեր>> ենթաբաժինները և և համալրվել են համապատասխան նյութերով:

<<Ծրագրեր>> բաժնի <<Մարզպետարանի աշխատանքային ծրագիր>> ենթաբաժնում տեղադրվել է Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի 2013 թ. աշխատանքային ծրագիրը և Վայոց ձորի մարզի 2011-2014 թվականների սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի 2013 թվականի տարեկան աշխատանքային պլանը:

Մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրվել են նաև Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմում, մարզպետարանի ենթակայության հիմնարկ ձեռնարկություններում և մարզի համայնքներում առաջացած թափուր պաշտոններին վերաբերող հայտարարություններ, քաղաքացիների ընդունելությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ ամսական և եռամսյակային կտրվածքով:

Ընդհանուր առմամբ 2013 թվականին բացվել և համալրվել են մի շարք բաժիններ իրենց ենթաբաժիններով՝ <<Մշտական գործող հանձնաժողովներ>>, <<Համազգային ծրագրեր>>, <<Հողերի կառավարում>>: <<Համայնքներ>> բաժնում՝ <<Մեթոդական օգնություն>> և <<Համայնքապետարանների, ՀՈԱԿ-ների, բյուջետային հիմնարկների հաստիքների թվաքանակը>> ենթաբաժինները: Ընդհանուր տեղեկություններ բաժնում՝ <<Պատմամշակութային հուշարձաններ>> խորագիրը, ուր զետեղված է մարզի տարածքում գտնվող եկեղեցիների և պատմամշակութային հուշարձանների մասին տեղեկատվություն և լուսանկարներ:

Նոր ենթաբաժիններ է բացվել նաև <<Դիմեք մեզ>> բաժնում՝ <<Տեղեկատվություն ստանալու հարցման օրինակելի ձև>>, <<Տեղեկատվություն ստանալու իրավունքն ու կարգը>> խորագրերով և համալրվել նյութերով:

Ամենօրյա աշխատանք է իրականացվել <<Միասնական տեղեկատվական հարթակ>> կայք էջում: Իրականացվել է <<ԶԼՄ մոնիտորինգ>>, ԶԼՄ-ներում տեղ գտած հրապարակումների առնչությամբ մարզպետի կամ մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների կողմից արձագանքման անհրաժեշտություն չի առաջացել :

Մոնիտորինգի արդյունքներ (4-րդ տեղ)

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կողմից իրականացված պետական կայքերի գործունեության թափանցիկության մոնիտորինգի արդյունքում ՎՁՄ կայքի թափանցիկությունը գնահատվել է 82.088 %:

Իրավաբանական բաժին

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և Վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարումը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավաբանական բաժնի կողմից իրականացվել է համայնքների կողմից մարզպետարան ներկայացված ավագանիների և համայնքների ղեկավարների որոշումների օրինականության ստուգում, որի արդյունքում հայտնաբերված խախտումները ուղղելու և թերությունները վերացնելու նպատակով պաշտոնական գրությամբ

վերադարձվել է 24 համայնքների ավագանիների կողմից ընդունված 42 որոշում, և 4 համայնքների ղեկավարների կողմից ընդունված 4 որոշում: Բոլոր որոշումներում սահմանված կարգով կատարվել են փոփոխություններ, լրացումներ և ներկայացվել են մարզպետարան:

Օրենսդրական դաշտի և օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրարկումն ապահովելու նպատակով պարբերաբար տրամադրվել է խորհրդատվություն՝ մարզի համայնքների ղեկավարների և ավագանու որոշումների, մարզային ենթակայության հիմնարկների և ընկերությունների ղեկավարների կողմից ընդունված իրավական ակտերի ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու վերաբերյալ:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի հիման վրա ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 190-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրին համապատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2013 թվականի մայիսի 20-ի թիվ 34-Ա, 2013 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 68-Ա, 2013 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 92-Ա որոշումների համաձայն նախատեսվել և իրականացվել է վարչական հսկողություն մարզի 10 համայնքների (Աղնջաձոր, Նոր Ազնաբերդ, Ագարակաձոր, Գլաձոր, Խաչիկ, Գոմք, Զառիթափ, Չիվա, Գողթանիկ, Հերմոն) ղեկավարների և ավագանիների կողմից իրականացված լիազորությունների նկատմամբ, որին մասնակցել է նաև իրավաբանական բաժինը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է մարզպետարանի աշխատակազմի վարչությունների և բաժինների կողմից նախապատրաստված Մարզպետի որոշումների և կարգադրությունների նախագծերի ուսումնասիրություն և տրվել են ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող պահանջների համապատասխանության վերաբերյալ եզրակացություններ:

Մարզխորհրդի նիստերում ներկայացվել են ՀՀ օրենքներում, ՀՀ Նախագահի հրամանագրերում, ՀՀ կառավարության որոշումներում և այլ իրավական ակտերում կատարված փոփոխությունները և դրանցից բխող տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրները:

Իր գործունեության ընթացքում իրավաբանական բաժինն ուսումնասիրել և պատասխանել է համայնքների բնակիչների կողմից Մարզպետին ուղղված դիմումներին:

<u>Քարտուղարություն</u>

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2013թ. մարզպետի կողմից ընդունվել են 99 որոշումներ, 146 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են հրամաններ, հրավիրվել է մարզխորհրդի 6 նիստ:

2013թ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 5185 և ելք են արվել 6988 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների հետ:

2013թ. ընթացքում մարզպետարանում առաջացել է քաղաքացիական ծառայության 10 թափուր պաշտոններ, որից 3-ը համալրվել են մրցույթով,2-ի հետ կնքվել է ժամկետային աշխատանքային պայմանագիր: ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմում ներկայումս առկա են հինգ թափուր քաղաքացիական ծառայության պաշտոններ աշխատանքներ են տարվում դրանց համալրման նպատակով:

2013թ ընթացքում ատեստավորվել են 23 քաղաքացիական ծառայողներ, որից 1-ը գլխավոր պաշտոն զբաղեցնող, 13-ը գլխավոր, 6-ը առաջատար, իսկ 3-ը կրտսեր պաշտոններ զբաղեցնող անձինք են:

2012թ. հանրապետության տարբեր ԲՈՒՀ-երում մասնագիտական վերապատրաստում են անցել 19 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների ընդունմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2013թվականին մարզպետի մոտ 1267 քաղաքացիների ընդունելություն է կազմակերպվել:

Տարվա ընթացքում ստացվել են 1343 դիմումներ, որից՝56-ը ստացվել են Ջերմուկի, 380-ը Վայքի, 907-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2013թ ընթացքում 790 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 38 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր,իսկ 43-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժոգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական,կենցաղային,գյուղ տեխնիկա և անասոններ ձեռք բերելու, աշխատնքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

Ստացված 1343 դիմումներից դրական լուծում են ստացել 1135-ը, անհիմն լինելու և մեր իրավասություններից դուրս լինելու պատճառաբանությամբ մերժվել են 138-ը, 70դիմումների լուծումը ընթացքի մեջ է:

2013թ. ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 1343 քաղաքացիներ, որից՝

1.	Դրամական օգնություն	850
2.	Նպաստի հարցերով	28
3.	Հողային վեճեր և սահմանների ճշտում	39
4.	Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	59
5.	Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	63
6.	Աշխատանքի տեղավորման	67
7.	ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	15
8.	Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	46
9.	Պետ.պատվերով բուժօգնություն	73
10.	Որդեգրման հարցերով	3
11.	Երեխաներին ներառական կրթության մեջ ընդգրկելու	46
12.	Խնամնակալություն և հոգեբարձություն սահմանելու խնդրանքով	54